


ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՊՈՊԱՆ Զ ՊԱՊԸ



Ն. Ա. Օթուհթջուր Տ. Տ. Վաշգեն Ա. Կաթողիկոս ԱՄԵԽԱՅԻ ՀԱՅՈՑ



## Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

### ՊԱՏՄԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ

Մայր Աթոռի և Վատիկանի միջև կատարված փոխադարձ թղթակցությունների հիման վրա, Ամենայն Հայոց Հայրապետը սույն թվականի մայիսի 8—12 օրերին, պաշտոնական այցելություն տվեց Հռոմի Սրբազն Քահանայապետին:

Պատմական և անհախընթաց սույն այցելության ժամանակ Հայոց Հայրապետի գրլիսավորած եկեղեցական պատվիրակության շքամիմի կազմում էին՝ Երուսաղեմի և Կ.Պոլսի հայոց պատրիարքները, հայրապետական պատվիրակներ, արքեպիսկոպոսներ և եպիսկոպոսներ:

Վատիկանում Հայոց Հայրապետը դիմավորվում և ողջունվում է որպես գերազույն Հովկապետը Արևելքի հնագույն և պատմական եկեղեցիներից մեկի՝ Հայաստանաց առաքելական եկեղեցու, որը քրիստոնեական առաջին դարից սկսած՝ ս. Թաղենոսի և ս. Բարթողիմեոսի քարոզությամբ պահել է իր սուրբ հավատքը ու հոգուր ժառանգությունը, ժամանակների հոլովույթի մեջ, հաճախ համատակության գնով:

Իրոք պատմական ու անհախադեպ էր կատարված սույն ողջուրությունը: Հայ եկեղեցու պատմությունը նման մի այլ ողջուրություն չի արձանագրուել այն հմաստով, որ այս անգամ Հայոց Հայրապետը պաշտօնական ու թանկագին հյուրն էր լինում Հռոմի Սրբազն Պապի:

Անցյալում, և մանավանդ Կիլիկյան հայկան իշխանության տարիներին, Հայոց Հայրապետները հարաբերության մեջ են ե-

ղել Հռոմի հետ, եկեղեցական բանակցությունների ճանապարհով առավելացես մեր երկրի քաղաքական անքարենպաստ կացությունը բարեկավելու նպատակով:

Ամենայն Հայոց Հայրապետի սույն այցելությունը մեր օրերին, սակայն, իր բնույթով և բովանդակությամբ բոլորովին տարբեր ողջուրություն էր: Հայոց Հայրապետը Հռոմ չէր գնացել «վասն քաղաքական ակնկալիութեանց», այլ որպես հավասար ընդ հավասարի ողջունելու Հռոմի Քահանայապետին և խոսելու քրիստոնեական եկեղեցին և աշխարհը հոգող բազում հրատապ հարցերի շորոջ:

Հայոց Հայրապետը մայիսի 9-ին Սրբազն Պապին ողջունելով ասում էր.

«Ձեզի կուգանք հեռու աշխարհն մը, սուրբ գրական Սրարատի երկուն, Հայաստանեն, և սուրբ քաղաք Էջմիածնեն, ծննդավայրը և բազմադարյան կեդրոնը հայոց քրիստոնեական հավատքին:

Մենք Ձեզի կուգանք նաև ժամանակի հեռուներեն, քրիստոնեական վկայությանց այնքան դարերու, ինչքան եղան դարերը Քրիստոսի թվագրության շրջանի: Հայ ժողովուրդը ու իր եկեղեցին կենդանի կպահեն այդ վկայությունները սկսալ ս. Թաղենու և ս. Բարթողիմեոսու առաքյալներու և ս. Գրիգոր Լուսավորչի ժամանակներեն, որոնց ժառանգությանց վեա խարսխված. է Հայաստանաց առաքելական եկեղեցին:

Կուգանք Ձեզի, Սուրբ Քահանայապետ և եղբայր Մեր ի Քրիստոս, բերելու մեր եկեղեցւոն և Հայաստանի ու սփյուռքի մեջ բո-

վանդակ ժողովուրդի հարգալիր ողջունը ձեր սուրբ մեծ եկեղեցին, և շնորհներով լի Ձեր անձին»:

Մայիսի 10-ին, կիրակի օր, ս. Պետրոս տաճարում Սրբազն Պապը, ողջունելով Ամենայն Հայոց Հայրապետին, ասում էր: «Մենք այսօր պատիվը և ուրախությունն ունենք մեր մեջ ունենալու բացառիկ մի հյուրի՝ Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա.-ին, որը եկել է ս. Էջմիածնից՝ Հռոմի եկեղեցուն բերելու ողջունը Հայաստանիաց փառավոր եկեղեցու, որն այնքան հարուստ է սրբերով և մարտիրոսներով»:

Տ. Տ. Վազգեն Ա. Հայոց Հայրապետի գահակալության տարիներին հայ եկեղեցին, Մայր Աթոռ ս. Էջմիածնի գլխավորությամբ, հանդես է եկել քոյլ եկեղեցիների հետ անձնական շփում և հարաբերությունն զարգացնելու ոգով և ցանկությամբ:

Այս ոգով առաջնորդված, 1956 թվականից ի վեր Հայոց Հայրապետը բազում պաշտոնական այցելություններ է տվել քոյլ եկեղեցիների պետերին, ինչպես այդ ծանոթ է բոլորին:

Հայոց Հայրապետի սույն այցելությունը Հռոմ և հանդիպումն ու ողջագործությունը Պողոս Զ Սրբազն Պապի հետ, առաջնորդվում էր նոյն սկզբունքներով:

Երկար տարիների ընթացքում հետո, դարձավ Տ. Տ. Վազգեն Ա. կաթողիկոսի օրով բարեկամական նոր կապեր և հարաբերություններ սկսվեցին ու զարգացան Մայր Աթոռի և Վատիկանի միջև: Դրա արտահայտությունը հանդիսացավ հայ եկեղեցու մասնակցությունը Վատիկանի Բ ժողովին որպես դիմուրդ՝ 1963—1965 թթ. և Հռոմի եկեղեցու ներկայացուցիչների այցելությունը Մայր Աթոռ 1965 թվականին և ապա 1969 թվականի աշնանը՝ Հայոց Հայրապետի ծննդյան 60-ամյակի հանդիսություններին:

Վատիկանում մայիսի 8—12 օրերը եղան ճշմարտապես պատմական և բացառիկ օրեր, երբ երկու Հայրապետները ս. Պետրոս Մայր տաճարում, ս. սեղանի առաջ, ողջագործեցին ու լիստեցին առավել անդապնել Հռոմեական Կաթոլիկ և Հայաստանաց առաքելական եկեղեցիների եղբայրական կապերը, քրիստոնեական միության ճշմարիտ ոգով և սիրով, ապագա ավելի սերտ համագործակցության ցանկությամբ:

Հայոց Հայրապետի Հռոմ այցելությունը մեծ իրադարձություն էր մեր ժամանակների միջեկեղեցական հարաբերությունների պատմության մեջ:

Մեր ապրած ժամանակաշրջանը էլերումների շարժման ժամանակաշրջան է: Արդի եկեղեցական կանքի պայմաններում միջեկեղեցական համար հանդիպումներ, շփումներ

օգտակար են և անհրաժեշտ՝ Քրիստոսի եկեղեցու միջև իրարիսակացողության, համագործակցության, եղբայրության և սիրություրությունության մեջ:

Ամբողջ աշխարհում, ընկերային, հասարակական ողջ կրամքը շարժման մեջ է: Տեղաշարժի մեջ է նաև քրիստոնեական եկեղեցին: Վերակենդանականության մի նոր շունչ երախանությունը առաքելության և կրոնական մեջ: Վերջ է գտն հիմ ժամանակակից հասունությունը եկեղեցիների մեկուսացման շրջանը:

Ամենայն Հայոց Հայրապետը մայիսի 11-ին Վատիկանում, Սրբազն Պապի գրադարանում, պատմական հանդիպման ժամանակակից շեշտում էր.

«Այս օրերուն նոր էջ բացինք հայոց եկեղեցին պատմության մեջ: Երանի թե սուրբ Հռովն ներշնչամբ Մենք և Մեր հաջորդները կարողանակ այս մարու էջն վրա արձանագրել վկացությունները մեր սիրությունը ներպայրության և մեր քրիստոնեական գործերուն»:

Երկու սրբազնատուր Հայրապետների սրբազնի ողջագործումը, կատարված սրբազն, հասարակաց աղոթքներն ու արարությունները, պաշտոնական ընդունելությունները, միջեկեղեցական գրուցները ուստագնացությունները դեպի վանքերն ու պատմական տաճարները, պայծառ արտահայտություններն էին, որ շատ բան է փոխված եկեղեցիների անցնալի պատմության հաճախ տխոր և դառն էջերի մեջ:

Արդարն, Շռում էր Հայոց Հայրապետը մայիսի 8-ին Հռոմում իր բարձր պատվի տրված առաջին պաշտոնական ճակարտություն, որ «եկած է ժամանակը որպեսի բարձր եկեղեցիները նոտենան իրարու և միասին աղոթքներ, միասին ներշնչվին, մեկը մյուս ողջ գորանան և միատեղ գործեն Աստծո փառքին և մարդու փառքին համար»:

Քրիստոնեական եկեղեցիների եղբայրական ու իրավ մերձեցումով և անշահամունք համագործակցությամբ միայն կարող է զրանալ Քրիստոսի ընդհանրական եկեղեցը և իր համախմբամական առաքելությունն կոչումը կատարել երկար կանքի դժվարությունը պարու պայմաններում, լինել համարձակ բան դիմարդի մեջ աշխարհի հետ, ապրել գործել մարդկության ծոցում, աշխարհի հետ և աշխարհի մեջ:

Մայիսի 12-ին, չորեքշաբթի օրը, Վատիկանում սուրբագրված համատեղ հայտարարության մեջ երկու Հռովնոր Պատերը, «գտակից իրենց հովանական պարտ կանություններին, երավեր են ողջում բոլոր քրիստոնյաներին և հատկապես կաթոլիկ եկեղեցու և Հայաստանաց առաքելական

կեղեցու զավակներին՝ առավել հավատար-  
մությամբ պատասխանելու նուրբ Հոգու կո-  
չին, որը մղում է նրանց դեպի առավել խոր  
միտքյուն, մեր բոլորի Փրկչի կամքի համա-  
ձայն, և որը առավել բեղմնավոր կղարձնի  
քրիստոնյաների ծառայությունը աշխար-  
հին»:

Երկու Հովվապետները միաժամանակ  
ցանկություն են հայտնում, որ քրիստոնեա-  
կան կյանքի բոլոր բնագավառներում և ողջ  
եկեղեցու կյանքում զարգանա առավել սերտ  
մի համագործակցություն։

«Հասարակաց աղոթքը, փոխադարձ հո-  
գեվոր օգնությունը, պատասխան աշխարհի հար-  
ցերին ճշմարտակես քրիստոնեական լուծ-  
ման սկզբունքներ գտնելու նպատակով գոր-  
ծադրվող միացյալ շանքերը թանկացին մի-  
շցոնքներ պիտի լինեն այնքան ցանկացված  
ամբողջական միտքան այն որոնման ծա-  
ռայության համար»։

Այսօր քրիստոնեական ընդհանուր եկեղե-  
ցու առաջ դրված հոգևոր, բարոյական, դաս-  
տիարակչական և ընկերային հիմնական  
հարցերից մեկը՝ դա ազգերի և ժողովուրդ-  
ների խաղաղ ու բարօր կյանքի պահպովու-  
թյան հարցն է, որպես քրիստոնեական ար-  
դարության և սիրո աստվածային պատգամ։

Այսօր աշխարհը, մեր օրերի մարդկությունը  
ապրում են ոգեկան տագնապի, բարոյա-  
կան անհավասարակշռության, ընկերային  
խոր հակասությունների մի ժամանակաշրր-  
շան։

Մարդկությանը դեռևս պակասում է հոգե-  
կան ապահով կովան, առաջնորդող լուս և  
ներքին անդորրություն։

Ահա թե ինչո՞ւ երկու Հայրապետները՝ Պո-  
ղոս Զ Պապը և Վազգեն Ա Ամենայն Հայոց  
կաթողիկոսը, Ավետարանի պատգամների  
լույսի տակ իրենց ձայնն են բարձրացնում  
համատեղ հայտարարության մեջ նաև ար-  
դիականության կարևոր հարցերի պաշտպա-  
նության ի նապատ, հնչախիք են ընկերա-  
յին արդարության, ժողովուրդների եղբայ-  
րության և մանավանդ կայուն և երկարատև  
խաղաղության պաշտպանության հարցը։

«Պողոս Զ Պապը և Վազգեն Ա կաթողի-  
կոսը բարձրացնում են իրենց ձայնը մի համ-  
դիսավոր կոչի մեջ՝ ուղղված բոլոր նրանց,  
որոնք ազգեցություն ունեն ազգերի և ժողո-  
վուրդների կյանքի վրա, այն նպատակով,  
որ նրանք շանան վեստրել և գտնել բոլոր  
հնարավոր միջոցները՝ վերջ տալու պատե-  
րազմներին, ատելությանը, Փիզիկական և  
քարոյական բռնությանը, մարդու կողմից  
մարդու հանդեպ կատարվող ամեն մի ճընշ-  
ման։

Նա, որ մեր խաղաղությունն է, թող այն-  
պես անի, որ այս կոչը լսելի լինի»։

Ծմարտապես բացադիկ ու պատմական  
եղան Ամենայն Հայոց Հայրապետի ինձե-  
րորդ ուղևորությունը, միջեկեղեցական և  
պետական մակարդակի վրա։

Հայոց Հայրապետը ամեն տեղ՝ Հոռմ, Վե-  
նետիկ, Սիլվան, Փարիզ, Լիոն, Վալանս,  
Սարսե, Սունակո, Լիսարոն և այլոր եղան  
թանկագին և սիրելի հյուրը կաթողիկ եկե-  
ղեցու և պետական իշխանությանց՝ արժա-  
նանալով բացադիկ պատիվների։ Այս առ-  
թիվ ամեն տեղ կատարված էկուսնեիկ ա-  
ղոթքներն ու համելիպությունները ամրապնդում  
էին Սայր Աթոռ և Էջմիածնի և քույր եկե-  
ղեցների բարեկամական կապերը, Բետա-  
գա ամելի սերս և գործարար համագոր-  
ծակցության համար։ Խոկ արտասանված ող-  
ջույնի խոսքերն ու ճառերը համելիսացան  
խանդակապա վկայություններ՝ հայ եկեղեցու  
դերի և առաքելության նշանակությանը, ինչ-  
պես անցյալում, նաև մեր օրերում։

Հայրապետական ինսերորդ ուղևորության  
առիթով Խոտայիսի, ողջ Ֆրանսիայի հայու-  
թյունը և հարևան երկրներից՝ Ավստրիայից, Բելգիայից, Գերմանիայից, Շվեյցարիայից, Անգլիայից, Հունաստանից, ինչպես նաև Բե-  
ռովոր ԱՄՆ-ից, Եգիպտոսից, Բելյութից, Իրանից ժամանած բազմաթիվ հայեր, դարձ-  
յալ ապրեցին հոգևոր ուրախության, ազգա-  
յին հայրատության, քաղցր և անմոռանալի  
տոնական օրեր, շնորհաբաշխ ներկայու-  
թյանը Հայոց Հայրապետի։

Հայոց Հայրապետը իր այցելած համայնք-  
ների ողջ հայությանը տարավ անձամբ Մայր  
Աթոռ և Էջմիածնի օրինությունն ու վերա-  
ծնված Հայոց երկրի ողջույնն ու բոլոր սրբ-  
ւերն ու հոգեները պայծառացրեց և ։ Եջ-  
միածնի հոգևոր բարձունքներից ճառագայ-  
թող լույսով, հայրենաշունչ պատգամներով  
և միավորեց հայկական ոգեկանության դրոշ-  
մով։

Ու վերադարձավ Հայոց Հայրապետը իր  
Աթոռը՝ հոգեպես միմիթարված, առավել զո-  
րացած ու վճռական՝ շարունակելու իր հո-  
գելոր, եկեղեցական, հայրենասիրական ա-  
ռաքելություն՝ ի պայծառություն հայ եկե-  
ղեցու, ի միմիթարություն հայ ժողովրդի և ի  
բարօրություն հայրենաց, ինչպես նաև միջ-  
եկեղեցական և պետական շրջանակներում  
բարձր պահած հայ հավատքի դարավոր  
ջահիր, հայ եկեղեցու սուրբ անունը և Մայր  
Աթոռի հայրապետական իշխանության հե-  
ռոհինակությունն ու հմայքը։

«Քև պարծի այսօր, սուրբ եկեղեցի», ով  
մեծ Հայրապետ Տ. Տ. Վազգեն Ա կաթողի-  
կոս Ամենայն Հայոց։